## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 402

### ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածը, որոշում եմ.

Ուժը կորցրած ճանաչել Գյուլագարակ համայնքի ղեկավարի 2019թվականի նոյեմբերի 06-ի թիվ 367 որոշումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2019թ. 12 09
գ.Գյուլագարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 403

## ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածը, որոշում եմ.

Ուժը կորցրած ճանաչել Գյուլագարակ համայնքի ղեկավարի 2019թվականի նոյեմբերի 06-ի թիվ 369 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2019թ. 12 09
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

11 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 404

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, Գյուլագարակ համայնքի ավագանու 14.10.2019 թվականի թիվ 81-Ա որոշումը, համայնքպետարանի աշխատակազմի աճուրդային և մրցութային հանձնաժողովի թիվ 20 արձանագրությունը, որոշում եմ.

ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Ամրակից գյուղի 11-րդ փողոց թիվ 10 հասցեում գտնվող 06-013-0016-0016 կադաստրային ծածկագրի հողամասը և 254,34քմ կիսակառույց անասնաշենքը 902000 /ինը հարյուր երկու հազար/ ՀՀ դրամով օտարել 2019թ. դեկտեմբերի 10-ին Գյուլագարակի համայնքապետարանի աշխատակազմի աճուրդային-մրցութային հանձնաժողովի կողմից անցկացված աճուրդում հաղթող ճանաչված Սարգիս Մինասի Ղարաքեշիշյանին: 06-013-0016-0016 կադաստրային ծածկագրի հողամասում առկա է նաև 6,15 քմ մակերեսով ինքնակամ շինություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

20 19թ. 12 11
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 405

## ԼԻԼԻԹ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՁ «Լիլիթ Ղուկասյանի»-ի հայտը, որոշում եմ.

1. Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Հոբարձի գյուղում գործող Ա/Ձ Լիլիթ Ղուկասյանի հայտը, նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվություն 01.07.2019թ.-ից 31.12.2019թ. ժամանակահատվածի համար:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 406

## ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐՈՒՄ ԵՎ ՔԱՐՏԵԶՆԵՐՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՍԽԱԼՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010 թ.-ի թիվ 186-Ն հրամանով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 43-րդ հոդվածով, հիմք ընդունելով Ա/Ձ «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ»-ի կողմից տրամադրված տեղագրական հատակագիծը և Լյովա Զուրաբյանի դիմումը , ***որոշում եմ***.

1. Հաստատել, որ Գյուլագարակ համայնքի Կուրթան բնակավայրում գտնվող 06-057-0032-0020 ծածկագրի հողամասի գծային չափերը և մակերեսը ենթարկվել են փոփոխության և համապատասխանում են իրական չափերին: Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը հաստատել՝ բնակավայրի բնակելի կառուցապատման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

20*19* թ. *12* *12*
գ.Գյուլագարակ

# ՈՐՈՇՈՒՄ

« 12 » Դեկտեմբեր 2019 թվականի N **407**

**ԳՅՈՒՂԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈԲԱՐՁԻ ԳՅՈՒՂԻ 06-062-0014-0001 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍ ՎԵՐԱՀԱՍՏԿԱՑՆԵԼՈՒ,ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայրենիք Աբրահամյանի դիմումը << Գասպար Վեքիլյան>> Ա/Ձ –ի կողմից տրված տնատիրության տեղագրական հատակագիծը, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով,64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով,Ստեփանավանի քաղաքային շրջանի խորհրդի գործկոմի 26.01.1987 թ.-ի թիվ 1 որոշման հիման վրա տրված գրանցման գիրք 2-3-14 սեփականության վկայագիրը, ՀՀ վարչական դատարանի 2016 թվականի օգոստոսի 18-ի թիվ ՎԴ 6/0269/05/11 վճիռը, ՀՀ փորձաքննությունների ազգային բյուրո ՊՈԱԿ-ի 27.05.2016 թ.-ի ՀՄ՝ 14-0437Դ եզրակացությունը, ՀՀ կառավարության 2005թ.Դեկտեմբերի 29 –ին թիվ 2387-Ն որոշմամբ `

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ․

1.Վերականգնել Գյուղագարակ համայնքի Հոբարձի գյուղի 06-062-0014-0001 ծածկագրի տակ գտնվող 0.10527 հա հողամասի հողհատկացման հիմքերը `

1)Գյուղագարակ համայնքի 06-062-0014-0001 ծածկագրի տակ գտնվող հողամասը 0.10527 հա

2)Հողամասի սահմանները և հատակագիծը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշման առաջին կետում նշված 0.10527 հա օրինական հողամասը անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Հայրենիք Աբրահամյանին, հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում,հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և/կամ/ չի առաջացնում սերվիտուտ:

3.Վերականգնել և ճանաչել 0,10527 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող,առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտի պահանջելու իրավունք չառաջացնող 1985թ.-ին կառուցված 72.08 քմ բնակելի տան, 1996 թ.-ին կառուցված 21.6 քմ բնակելի տան, 1985թ.-ին կառուցված 94.77 քմ բնակելի տան, 1996թ.-ին կառուցված 18 քմ պարիսպի, 1985 թ.-ին կառուցված բաց պատշգամբի նկատմամբ Աբրահամյան Հայրենիք Հայկազի /ծնված 01/02/1947 .-ին/, սեփականության իրավունքը:

4.Հողամասի սահմանները որոշվում են Ա/Ձ <<Գասպար Վեքիլյանի>> կողմից կազմած և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

5.Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե Գյուղագարակ համայնք գյուղ Հոբարձի 2-րդ փողոց, թիվ 12:

**Համայնքի ղեկավար** **Մ.Գևորգյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 408

### ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈԲԱՐՁԻ ԳՅՈՒՂԻ 06-062-0014-0002 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ և ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Բաղդասար Աբրահամյանի դիմումը «Գասպար Վիքեյան» Ա/Ձ-ի կողմից տրված տնատիրության տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 3-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, հիմք ընդունելով 16 Հուլիսի 2003թ.-ին տրված սեփականության վկայականը, ՀՀ վարչական դատարանի 2016 թվականի օգոստոսի 18-ի թիվ ՎԴ 6/0269/05/11 վճիռը, ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի 27.05.2016թ.-ի ՀՄ՝ 14-0437Դ եզրակացությունը, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ին թիվ 2387-Ն որոշումը՝

1. Հաստատել որ Գյուլագարակ համայնքի Հոբարձի գյուղի 06-062-0014-0002 ծածկագրի հողամասի գծային չափերը և մակերեսը ըստ Ա/Ձ «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆԻ» կողմից կզմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի ենթարկվել են փոփոխման:

1) Գյուլագարակ համայնքի 06-062-0014-0002 ծածկագրի տակ գտնվող 0.11584 հա:

2. 06-062-0014-0002 ծածկագրով հողամասում շինությունների փոփոխություն չկա, հողամասի սահմանները փոփոխվել են Հայրենիք Հայկազի Աբրահամյանի հետ երկկողմանի համաձայնությամբ:

3. Հողամասի սահմանները որոշվում են Ա/Ձ «Գասպար Վեքիքյանի» կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

4. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե Գյուլագարակ համայնք գյուղ Հոբարձի 2-րդ փողոց, թիվ 11:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 409

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի 06-104-0012-0006 ծածկագրի տակ գտնվող տանը և տնամերձին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք գյուղ Վարդաբլուր 6-րդ փողոց, թիվ 12:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2019թ. 12 12
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ու Մ

«12» Դեկտեմբերի 2019 թվականի N **410**

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի բնակիչ Արթուր Ալեքսանյանի կողմից ներկայացված դիմումը՝ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղ 30-րդ փողոց թիվ 2 հասցեում նրա կողմից ինքնակամ կառույցները օրինականացնելու մասին խնդրանքը, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածը, Ա/Ձ «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ»-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, նկատի ունենալով, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշման պահանջներով ՝ ***որոշում եմ.***

1. Օրինականացնել Արթուր Ալեքսանյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող 0.35078 հա հողամասում ինքնակամ կառուցված՝ 49,37 քմ մակերեսով պարիսպները:
2. Օրինականացման համար պարտավորեցնել համայնքի բյուջե վճարել՝ 49,37 քմ մակերեսով պարիսպների համար 17280 /տասնյոթ հազար երկու հարյուր ութսուն/ ՀՀ դրամ:
3. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 01.10.2019 թ.-ի թիվ 322 որոշումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ... 06954155

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» Դեկտեմբերի 2019 թվականի N 411

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի 06-104-0035-0010 ծածկագրի ջրային նպատակային նշանակության լիճ գործառնական նշանակության հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գ. Վարդաբլուր Սարի թաղ, թիվ 7/2:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 412

### ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, որոշում եմ.

1. Գյուլագարակ համայնքի 2019 թվականի բյուջեի Գյուլագարակ, Ամրակից, Հոբարձի մանկապարտեզների և «»Գյուլագարակ համայնքի ընդհանուր սպասարկում» ՀՈԱԿ-ի նախահաշիվներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

20 19 թ. 12. 17
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 413

### ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՐԳԱՌ ԳՅՈՒՂԻ 06-027-0053-0006 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԷՄԻՆ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՆՉև 15.05.2001Թ՝ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ՝ ՄԻՆՉև 15.05.2001Թ՝ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՈՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էմին Մուրադյանի դիմումը, Ա/Ձ «Ա. ՍԱՔԱՆՅԱՆԻ»-ի կողմից տրված տնատիրության տեղագրական հատակագծի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնկելի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ, որոշում եմ՝

1. Օրենքի ուժով 06-027-0053-0006 ծածկագրի տակ գտնվող 0.06436 հա փաստացի օգտագործման հողամասի նկատմամբ վերականգնել և ճանաչել Էմին Մուրադանի սեփականության իրավունքը:

2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և /կամ/ չի առաջացնում սերվիտուտ:

3. Վերականգնել և ճանաչել 0.06436 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1968թ. կառուցված 27.52 քմ բնակելի տան, 1995թ. կառուցված 40.59 քմ բնակելի տան, 1968թ. կառուցված 29.04 քմ բնակելի տան, 1995թ. կառուցված 41.73 քմ բնակելի տան, 1995թ.-ին կառուցված 5.86 քմ աստիճանահարթակի, 1995 թ.-ին կառուցված 8.05 քմ խոզանոցի, 1995թ-ին կառուցված 20.58 քմ գոմի, 1995 թ.-ին կառուցված 1.58 քմ պարիսպի նկատմամբ Էմին Մուրադյանի իրավունքը:

4. Հողամասի սահմանները որոշվում են Ա/Ձ «Ա. ՍԱՔԱՆՅԱՆԻ»-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե Գյուլագարակ համայնք գյուղ Գարգառ 4-րդ փողոց, 1-ին նրբանցք, թիվ 3:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ      ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 20» Դեկտեմբերի 2019 թվականի N 414

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. 06-029-0049-0016 ծածկագրի 0,13 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գ. Գյուլագարակ 2 փողոց, թիվ 11 ։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 20» Դեկտեմբերի 2019 թվականի N 415

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. 06-029-0065-0014 ծածկագրի 0,09 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գ. Գյուլագարակ 2 փողոց, թիվ 76 :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 416

<<ԳՐԻԳ ՀԱՈՒՍ>> ՍՊԸ -ԻՆ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՁ «Գրիգ Հաուս» ՍՊԸ-ի հայտը, որոշում եմ.

1. Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղում գործող «Գրիգ Հաուս» ՍՊԸ-ի հայտը, նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվություն 01.10.2019թ.-ից մինչև 31.12. 2019թ. ժամանակահատվածի համար:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» Դեկտեմբեր 2019 թվականի N 417

## ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ, ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ 06-029-0041-0010 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԻՍԱՔԱՆԴ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով լիազորված անձ Արթուր Սուքիասյանի դիմումը, 06.12.2019թ. կազմված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը՝ գրանցամատյան 3862, Ա/Ձ «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» կողմից տրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, 3-րդ և 57-րդ հոդվածներով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ՝ *որոշում եմ.*

1. Վերականգնել Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0041-0010 ծածկագրում գտնվող 0.10899 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը՝

   ա/ Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0041-0010 ծածկագրի հողամասի մակերեսը 0.10899 հա:

   բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.10899 հա մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Հովիկ Բաղդասարյանին և մինչև 15.05.2001թ. վերը նշված հողամասում կառուցված կիսաքանդ շինության նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:
3. Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0041-0010 ծածկագրում, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ չառաջացնող՝ 1965թ. կառուցված՝ կիսաքանդ շինության նկատմամբ ճանաչել նրա սեփականության իրավունքը:
4. Վերը նշված անշարժ գույքին տրամադրել փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ Գյուլագարակ համայնք, գյուղ Գյուլագարակ, 1 փողոց, թիվ 4:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 418

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով Ամասյա Դոխոյանի հայտը, որոշում եմ.

ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ բնակավայրի բնակիչ Ամասյա Դոխոյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ բնակավայրի 5-րդ փողոց թիվ 38 հասցեում միջին ռիսկայնության անասնաբուժական դեղատուն և թունաքիմիկատների վաճառքի կետ կառուցելու համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2019թ. 12 20
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

« 20» Դեկտեմբերի 2019 թվականի N419

**ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ 06-029-0112-0009 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍ ՎԵՐԱՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Վահագն Մաղաքյանի դիմումը, Ա/Ձ <<Գ. ՎԵՔԻԼՅԱՆ >> - ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Վերականգնել Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0112-0009 ծածկագրի 0.59450 հա մակերեսով վարելահողի հողհատկացման հիմքերը՝

ա/Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0112-0009 ծածկագրի վարելահողի մակերեսը 0.59450 հա

բ/հողամասի սահմանները որոշում Ա/Ձ <<Գ. ՎԵՔԻԼՅԱՆ >> -ի կողմից տրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագիծ ։

2.Սույն որոշման 1-ին կետով նշված 0.59450 հա մակերեսով վարելահողը անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Վահագն Մաղաքյանին։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

# ՈՐՈՇՈՒՄ

« 20» Դեկտեմբերի 2019 թվականի N 420

## ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ 06-029-0126-0053 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍ ՎԵՐԱՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահագն Մաղաքյանի դիմումը, Ա/Ձ <<Գ. ՎԵՔԻԼՅԱՆ >> - ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վերականգնել Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0126-0053 ծածկագրի 0.13080 հա մակերեսով վարելահողի հողհատկացման հիմքերը՝

ա/Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0126-0053 ծածկագրի վարելահողի մակերեսը 0.13080 հա

բ/հողամասի սահմանները որոշվում Ա/Ձ <<Գ. ՎԵՔԻԼՅԱՆ >> -ի կողմից տրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի :

2.Սույն որոշման 1-ին կետով նշված 0.13080 հա մակերեսով վարելահողը անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Վահագն Մաղաքյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՈՐՈՇՈՒՄ

« 20 » Դեկտեմբերի 2019 թվականի N 421

Համայնքի ղեկավարի որոշում

## ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ 06-029-0060-0007 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍ ՎԵՐԱՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ,ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վահագն Մաղաքյանի դիմումը , << Գագիկ Վլադիմիրի Մեսրոպյան>> Ա/Ձ –ի կողմից տրված տնատիրության տեղագրական հատակագիծը,ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով,64-րդ հոդվածի 8-րդ և 16 –րդ մասերով,<<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հարապետության օրենքի 2-րդ և 3 –րդ հոդվածներով,<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ-ի դեկտեմբերի 29-ի. թիվ 2387 որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վերականգնել Գյուլագարակ համայնքի 06-029-0060-0007 ծածկագրի տակ գտնվող 0.07243 հա հողամասի հողհատկացման հիմքերը `

1)Գյուլագարակ համայնքի 06-029-0060-0007 ծածկագրի տակ գտնվող հողամասը 0.07243 հա

2)Հողամասի սահմանները և հատակագիծը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշման առաջին կետում նշված 0.07243 հա օրինական հողամասը անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Վահագն Մաղաքյանին, հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում,հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և/կամ/ չի առաջացնում սերվիտուտ:

3.Վերականգնել և ճանաչել 0,07243 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող,առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտի պահանջելու իրավունք չառաջացնող 1935թ.-ին կառուցված 34,44 քմ բնակելի տան, 1935թ.-ին կառուցված 4,39 քմ. բնակելի տան, 1935թ.-ին կառուցված 13,87 քմ. բաց պատշգամբի նկատմամբ Մահագն Մաղաքյանի սեփականության իրավունքը:

5.Հողամասի սահմանները որոշվում են Ա/Ձ <<Գ. Վեքիլյանի>> կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

6.Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե Գյուլագարակ համայնք գյուղ Գյուլագարակ 19-րդ փողոց,թիվ 3:

**Համայնքի ղեկավար՝** **Մ.Գևորգյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

« 20» Դեկտեմբերի 2019 թվականի N 422

**ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ 06-029-0125-0087 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Վահագն Մաղաքյանի դիմումը, Ա/Ձ <<Գ. ՎԵՔԻԼՅԱՆ >> - ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Վերականգնել Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0125-0087 ծածկագրի 0.09235 հա մակերեսով վարելահողի հողհատկացման հիմքերը՝

ա/Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0125-0087 ծածկագրի վարելահողի մակերեսը 0.09235 հա

բ/հողամասի սահմանները որոշվում Ա/Ձ <<Գ. ՎԵՔԻԼՅԱՆ >> -ի կողմից տրված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի :

2.Սույն որոշման 1-ին կետով նշված 0.09235 հա մակերեսով վարելահողը անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Վահագն Մաղաքյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 423

### 06-104-0035-0020 ԾԱԾԿԱԳՐԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի 06-104-0035-0020 ծածկագրի տակ գտնվող տնամերձին տրամադրել փոստային հասցե՝ Գյուլագարակ համայնք գ. Վարդաբլուր, Սարի թաղ N 45:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 424

### 06-029-0072-0001 ԾԱԾԿԱԳՐԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղի տարածքում գտնվող և սեփականության իրավունքով հանգուցյալ Սերյոժա Յասաբեկի Զալինյանի ընտանիքին պատկանող 06-027-0077-0016 ծածկագրի տակ գտնվող տանը և տնամերձին տրամադրել 1-ին փողոց թիվ 11:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 425

## 06-093-0007-0002 ԾԱԾԿԱԳՐԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետը, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387 որոշումը՝ որոշում եմ.

1.06-093-0007-0002 ծածկագրի բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գ. Պուշկինո 2-րդ փողոց, թիվ 22:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 27 » ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019 թվականի N 426

Համայնքի ղեկավարի որոշում

## ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անահիտ Մեսրոպի Մեսրոպյանի դիմումը, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 17.05.2012թ. /Գործ թիվ ԼԴ3/0244/02/12/ վճիռը, ՀՀ կառավարության 09.06.2005 թվականի թիվ 843-Ն որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 43-րդ հոդվածով, 64-րդ հոդվածով, 60-րդ հոդվածով, 118 հոդվածով որոշում եմ.

1. Քաղաքացի Անահիտ Մեսրոպի Մեսրոպյանը դիմել է համայնքապետարան, համաձայն 17.05.2012թ. /Գործ թիվ ԼԴ3/0244/02/12/ դատարանի վճռի, Լոռու մարզի Գյուլագարակ համայնք, գ.Գյուլագարակ 06-029-0072-0001 ծածկագրից տարանջատված, նախկին խոտացված կերերի /ֆուրաժի/ արտադրամասի շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի հողօգտագործման իրավունքը ձևակերպելու խնդրանքով: Անահիտ Մեսրոպի Մեսրոպյանին պատկանող նախկին խոտացված կերերի արտադրամասի շենքի զբաղեցրած և սպասարկան համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի զբաղեցնում է 0.12833 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, պահեստարաններ գործառնական նշանակության հողամաս, որը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերի սահմանված պահանջներին և ընդգրված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ուստի ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետով վերականգնել Անահիտ Մեսրոպի Մեսրոպյանին պատկանող նախկին խոտացված կերերի արտադրամասի շենքի զբաղեցրած և սպասարկան համար անհրաժեշտ հողամասի հողհատկացման հիմքերը 0.12833 հա մակերեսի չափով, որը օրենքի ուժով սեփականության իրավունքով փոխանցվում է Անահիտ Մեսրոպի Մեսրոպյանին:
2. Հողամասի սահմանները որոշվում են «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-ի կողմից 18.10.2019թ. կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
3. Սույն որշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ.Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 427

## ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով Արամ Նազարյանի հայտը, որոշում եմ.

ՀՀ Երևան քաղաքի բնակիչ Արամ Նազարյանին տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ բնակավայրի 2-րդ փողոց թիվ 62 հասցեում միջին ռիսկայնության բնակելի տուն և հարակից շինություններ կառուցելու համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 428

### 06-029-0072-0001 ԾԱԾԿԱԳՐԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0072-0001 ծածկագրի տակ գտնվող պահեստներին /0.12833/ տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գ. Գյուլագարակ 31-րդ փողոց թիվ 7
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2019թ. 12 27
գ.Գյուլագարակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 429

## ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ, ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ և ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄԱՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի, առաջնորդվելով Գյուլագարակ համայնքի ավագանու 2019թ. դեկտեմբերի 26-ի «Գյուլագարակ համայնքի 2020թ. բյուջեն հաստատելու մասին» թիվ 98 որոշմամբ, որոշում եմ.

1. Հաստատել 2020թ. բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումները:

2. Հաստատել համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկների 2020թ. ծախսերի նախահաշիվները ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2019թ. 12 27
գ.Գյուլագարակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 430

## ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ , 4-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով ԱՁ Շիրակ Ճշմարիտյանի հայտը, որոշում եմ.

1.Բավարարել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում գործող ԱՁ Շիրակ Ճշմարիտյանի հայտը, նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 01.01.2020թ.-ից 31.12.2020թ. ժամանակահատվածի համար:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

20 19 թ. 12 30
գ. Գյուլագարակ